

N927

66

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈԼՈՐ ԸՆԿՐԵՄՆԵՐԻ, ՄԻԱՅՆ!

Ա.Ա.Խ.Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄ—ԳԼԽՔԱՂԼՈՒՍՎԱՐ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ

# ԹՐԱԳԻԲ

ԼԻԿՈՎԵՆԵՐԻ ԸՆԹԵՆՑԻԾՆ ԽՄԲԿՆԵՐԻ  
8-ԸՄՄԸ ԳԸՄԸՆԹԸՑԻ ՀԵՐԵՐ

ԿԱԶՄԵՑ ԲՈԳՔԱՀԱԽՎԱՋՈՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԹՈԳԱԿԱՆ ԲՅՈՒ

БИБЛИОТЕКА  
ИИ СИНДА  
ВОСТОКОСЕДЕНІІ  
АКАДЕМІИ НАУК  
СССР

Հայոցակարգի Ապրեամի Գլխապրտություն  
ԹՕԳՈՒՏ - 1927.

374.6

Ա-67

1928 № 994  
БИЛ 120 - 10

СА М  
СА 647  
374.6  
—  
18-67.

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵԲԻ, ՄԻՇԵՔ!

Ա. Ա. Խ. Հ. ՀՈՒՍՔՈՂԿՈՄ — ԳԼԵՔԱՂՀՈՒՎԱՐ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՈՄՊԼԵՔՍԱՑԻՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԾՐԱԳԻՐ

Լիկովաների Ազգային Կոմիտեի և ԽՄԲԿՆԵՐԻ 8-ԱՄՍՅԱ  
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ



Հրաս. Ադր. Գլխադիտավարի

ԲՈԳՈՒ — 1927 թ.

ԼԻԿԱՑԱՆՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ 8-ԱՄՍՅԱ ԴԱՍԸ-  
ԹԱՑԻ ՀԱՐՄԱՐԵՑՐԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ  
**ՆԱՄԱԿ**

Напечатано в гостип. „Красный Восток“  
Бакполиграфа.  
Баку, Карапинная, № 84.  
Главлит № 3272. — Заказ № 7298.  
Тираж 300 экземпляров.



60348 · 67

Բագվում, նրա շրջաններում և մասամբ ել գալառում անպաղիտության վերացման ասպարեզում տարված աշխատանքների միջանկի տարվա փորձն առաջացրեց այդ խմբակների պարապմունքները յերկարատև դարձնելու խնդիրը, այն եւ հասցնել պարապմունքների ընթացքը նորմալ ուսումնական տարվա տևողության։ Մինչև 1926—27 ուսումնական դոյլություն ունեցած պարապմունքների 4 ամսյա տևողությունը անբավարար եւ ճանանչված թե՛ դաստուների և թե աշխատանքի մեթոդական մասը դեկավարողների կողմից։ Բանվորների «վախտաները» (հերթակալությունը), կուսակցականների հասարակական աշխատանքներով ծանրաբեռնված լինելը, խմբակներում սովորողների տարբեր գալառաբարեառներով խոսելը և այլ շատ պատճառներ արգելվ են հանդիսանում 4 ամսվա ընթացքում գրել-կարդալ ու հաշվել սովորեցնելու գործում։ Ահա այն պատճառները, վորոնք ստիպեցին այդ խմբակներում տարվող պարապմունքների տևողությունը յերկարացնել 4-ից մինչև 8 ամիս, վորի հետևանքով և պահանջ առաջացավ կազմել ներկա նոր ծրագիրը։ Վերջինս հարմարեցրած եւ 8-ամսյա ժամանակամիջոցի ուսուցման համար, իսկ կոմպլեքսները դասավորված են տնտեսաշխարհականության շուրջը։ Միայն առաջին՝ այլբենական մասն ընդգրկող թեման եւ ազատ մնացել այդ ձեւի կոմպլեքսային դասավորումից։ Ամբողջ ծրագիրը բաժանված է կոմպլեքսներով 7 թեմաների, վորոնք են։

—Խորհուրդների իշխանությունը—աշխատավորների իշխանությունն է:

լլ. Ա. Հ. Մ-յան և Անդրկովկասի հարստություններն ու  
բնակչության զբաղմունքները:

լլլ—Ե. Ս. Հ. Ա. և Անդրկովկասի արդյունաբերությունը:

Վ-ի. Ա. Հ. Մ. և Անդրկովկասի գյուղատնտեսությունը:

V.—Խ. Ա. Հ. Մ. և Անդրկովկասի հաղորդակցության ճանապարհներն ու դրանց դերը աշխատավորների միջև տնտեսական կապ ստեղծելու գործում:

VI.—Խ. Ա. Հ. Մ.-յան ազգաբնակչությունը:

VII.—Խ. Ա. Հ. Մ-նը և ուրիշ յերկրները:

Յուրաքանչյուր թեմա բաժանած ե 5 սյունյակների, իսկ ին թեմայում տնտեսաշխարհագրության և աշխարհագիտության (բնագիտության) սյունյակները բաց են թողնված, վորովհետև այբբենն անցնելիս պետք ե ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել բացառապես գրել-կարդալու և հաշվելու մեխանիզմի վրա: Միայն յերկրորդ թեմայից սկսած մտցրված են տնտեսաշխարհագրություն, քաղգրագիտություն և աշխարհագիտություն, վորովհետև այդտեղ թեթև ու հեշտ նյութի վրա արդեն կարելի յե գաղափար տալ այս կամ այն դիսցիպլինների մասին\*):

Դասատուի հայեցողությանն ե թողնված թեմա-կոմպեքսների նյութերը դասերի բաժանելու գործը, վորովհետև դա կախումն ունի տեղական պայմաններից (որ սովորողների կազմի մեծամասնության աշխատանքի բնույթը): Այբբենական խմբակի դասատուի խնդիրն ե՝ աշակերտությանը տալ գրելու, կարդալու և հաշվելու ունակություններն այնպես, վոր դրանց կողմից անգրագիտանալու ուցիչիվ (կրկնում) այլև չինի: Ուստի դասատուի ամբողջ ուշադրությունը պետք ե կենտրոնանա այդ ունակությունների յուրացման և ամրապնդման վրա: Քաղգրագիտական տեղեկությունները պետք ե տալ վհա՞ թե վորպես վորուակի գիտուրյուն, այլ վորպես ընդհանուր տեղեկություններ, վորպեսզի կիսագրագետ մարդը հնարավորություն ունենա հասկանալու խորհրդային շինարարության խնդիրները: Գրել-կարդալ սովորեցնելիս պետք ե հատուկ ուշադրություն դարձնել սովորողների բանավոր վոճի զարգացման վրա, վորին այդ խմբակներում մինչեւ այժմ առհասարակ շատ սակավ ժամանակ և ուշադրություն են հատկացրել: Այդ նպատակին պետք ե ծառայեն բացատրական, նախապատրաստական և ամփոփող զրույցները, վորոնց մեջ պետք ե ամեն կերպ մասնակցեն սովորողները և տրված հարցերին տան, հնարավորության չափ, լրիվ պատասխաններ: Ըստհանրապես բանավորը նույնքան ուշադրություն ե պահանջում, վորքան և գրավորը, հակառակ դեպքում սովորողները մեխանիկորեն կարդալուց և գրելուց դեմք չեն անցնի:

\* ) 1 թեման հաշված ե 2-ամսյա պարապմունքների, իսկ մնացած 6 թեմաները՝ յուրաքանչյուրը մեկ-մեկ ամիսների համար (միջին հաշվով):

Հեղափոխական տոններին վերաբերող նյութեր ծրագրում չկան: Բայց այդ պետք ե կատարի ինքը դասաւուն, ոգտվելով տեղական Ագիտապրոտիվի մամուլում տված նյութերից և մտցնելով այն դասընթացի մեջ վորպես 1-2 որվա կոմպլեքս:

### Հ Ա Ց Ո Ց Լ Ե Զ Ո Ւ

Հստ ծրագրի, գիտելիքների ծավալը նպատակ ունի՝ տալ սովորողներին հիմնական տեխնիկական ունակություններ և դրանք այն աստիճան ամրապնդել, վոր անգրագիտության ուցիչիկն այլև անհնար դատնա: Լեզվի ծրագրի ծավալին ավելի մանրամասն ծանոթանալու նպատակով անցնենք նրա առանձին-առանձին կետերի ուսումնասիրությանը, առանձնապես այն կետերի, վորոնք կարուեն այս կամ այն բացատրության:

#### 1. ԿԱՐԴԱԼ (ընթերցանությունը)

Այստեղ կարծես թե հատուկ բացատրություններ չեն ել հարկավոր: Ամբողջական բառերի և նախադասությունների մեթոդը կիրառված ե կյանքում, ծանօթ ե բոլորին, և այստեղ վորեե բան բացատրել ու ապացուցել չի հարկավոր: Դասատուն պետք ե բեւվեռի իր ուշադրությունը բառերը վանկերի բաժանելու վրան: Այդ պետք ե անել ու կրկնել ամբողջ ուսումնական տարվա ընթացքում, ծանոթանալով մանավանդ յերկար ու դժվար արտասանելի բառերի վրա:

Բառեր վանկելու տեխնիկան լավ իմացողները միշտ ել, առանց ուսուցչի ոգնության, կկարգողանան կարգալու և գրելու ժամանակ ուղղել իրենց սխալները: Սովորողների հիշողության մեջ ավելի բառապատկերներ ամրացնելու նպատակով անհրաժեշտ ե յուրաքանչյուր հոդվածը կարդալ միքանի անգամ:

#### 2. ՈՒՂԱՎԻԱԳՐԱԿԱՆ ՈՒՆՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուղղագրական ունակություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ ե մեծ ուշադրություն դարձնել «ը» և «յ» տառենչյունների վրա, վորովհետև սովորողները կարգալու ժամանակ հաճախ չեն ել արտասահման այդ հնչունները, և այդ հաճախամանքի պատճառով ել գրավորներում սխալներ են լինում: Այդ ավելի յե աչքի ընկնում, յերբ «ը»-ն գործ ե ածվում վանկելու ժամանակ և տողագրարձի դեպքերում: Ահա այդ ուղղությամբ պետք ե վարժություններ կատարվեն ամեն մի հարմար դեպքում: այդ աշխատանքը հանձնարարվում ե դասատուին: Առողանության նշանները նույնպես մեծ ուշադրություն են պահանջում:

Մեծ չափով ուշադրություն պետք է դարձնել նախդիրների և հետդիրների գործածության և նրա յուրացման վրա: Ինքն ըստ ինքյան պարզ է, վոր սովորողներին պետք է ամեն կերպ ստիպել՝ ուշադրությամբ վերաբերվելու կարդացած նյութին, վորպեսզի նրանք այնունետև կարողանան ոգտագործել այն ինքնուրույն աշխատանքի համար թե բովանդակության և թե ձեկի նկատմամբ: Այս- տեղ ավելորդ չե նաև շեշտել, վոր ոժանդակ բայերի արտասանության վրա պետք է կրկնապատիկ ուշադրություն դարձնել, վորպեսզի այդ բայերը կարդալու ժամանակ անջատան ջատ չարտասան- վեն, իսկ գրելիս միացած չգրվեն: Հենց առաջին որից անհրաժեշտ է դրա վրա ուշադրություն դարձնել:

Պետք է սովորողները լավ ըմբռնեն, վոր բառերը խոսակցության մեջ փոփոխում են իրենց վերջավորությունները (խոնար- հումների և հոլովումների ժամանակ), ուստի ուշադրություն է պա- հանջվում, վոր այդ ուղղությամբ վորոշ վարժություններ կատարվեն: Այդ հանգամանքը սովորողների համար կծառայի վորպես բացա- տրություն, թե ինչու դասառուն միշտ պահանջում է վերջավորու- թյունները պարզ արտասանել, վորովհետև գրության ժամանակ սխալներն անխուսափելի յեն հենց զուտ այն պատճառով, վոր արտաստնության ժամանակ շատ բառերի վերջին վանկերի հնչյուն- ները սղվում են:

Կետադրության նշաններից առաջին հերթին անպայման պետք է ծանոթացնել վերջակետի գործածության հետ: Կետադր. մյուս նշանների հետ ծանոթացնելն անհրաժեշտ է կատարել ընթերցանության ժամանակ և զուգընթացաբար բացատրել, վորպեսզի կարդա- ցածի իմաստը չկորչի:

Ստիպված լինելով աշխատել մեծերի և մեծահասակների հետ, պետք է աշխատել, վոր մշակվող նյութը համապատասխանի նրանց հասակին ու պահանջներին: Նյութեր պալիս են՝ դասագիրքը, լրա- գիրը և ինքը կյանքը. հարկավոր է կարողանալ ընտրություն կա- տարել և համապատասխան ձեռով մշակել:

Դասատուի գործը թեթևացնելու նպատակով ծրագրի մեջ նշած է գրավոր աշխատանքների մի շարք, վոր կարող է հետաքրքրել բանվորական կազմ ունեցող դասարանը: Այդ աշխատանքների տե- սակները փոփոխելով, կապակցելով իրար հետ զանազան ձեռով (որ. գիտողական թեթևադրությունը կապելով «գիմում»-ի հետ), պարզացնելով և բարդացնելով նյութերը՝ խմբակի կազմին համա- պատասխան ձեռվ, դասատուն միշտ համարական կունենա- գրավելու դասարանի լարված ուշադրությունը դեպի նյութը:

Այժմ կանգ առնենք միքանի առանձին-առանձին աշխատանք- ների վրա:

Այս կամ այն ունակության յուրացման և ամրացման միջոցը նյութերի ընտրությունն է, ինչպես որինակ «ը», «յ» հնչյունների և ոժանդակ բայերի վերաբերյալ:

Դիտողական թելսդրությունը պետք է կիրառել ամբողջ ուս- ման ընթացքում և թույլ և միջակ խմբակներում, բարդացնելով նրա ձեռքը, աստիճանաբար մտցնելով ավելի դժվար բառեր, յեր- կար նախադասություններ և յուրաքանչյուր դեպքում վերջի վերջո անցնելով լողական գրությանը: Ցուցակ կազմելը կարելի յե սկսել թեկուց հենց դասարանի իրերի ցուցակը կազմելուց, իսկ դրան հաջորդող աշխատանքները կախված են արդեն տեղի պայմաններից: Բառերի կրծատ գրելը պետք է սկսել ամենապարզերից, ինչպես որինակ՝ ուռւք, կոռա, որ. (որինակ), գրվ., կմ., սմ. և այլն: Ան- կետները կարելի յե սկսել 4-5 հարցերից, ինչպես որինակ՝ «ազգա- նուն», «անուն», «հայրանուն», «ընտանյեկան դրությունը»: Հե- տագայում այդ հարցերի թիվը կարելի յե ավելացնել:

„Հաշիվ“, „Դիմում“, „Վկայագիր“ և նման այլ գրությունները կարելի յե ներկայացնել վորպես շատ կարճ, յերկու-յերեք համա- ռոտ նախադասություններից կազմված գրավոր աշխատանքներ, վորոնք սկզբում կարելի յե կապել նույնիսկ դիտողական թեթևադրու- թյան հետ:

Մշակվող թեմաների նյութերին վերաբերող հարցերի համար ստացած պատասխանները կարելի յե ընդունել սկզբում, վոր կազմը- ված լինեն 2-3 բառից: Հետագայում պետք է հետզհետե այդպիսի պատասխանները լրացնել տալ և այդպիսով սովորեցնել լրիվ պա- տասխաններ կազմելու ձեւը: Ընդհանրապես չպետք է դիմել գրավոր աշխատանքի, յեթե նյութը բանավոր կերպով լավ մշակված և դյուրմբռների դարձրած չե: Հակառակ դեպքում, չնայած դասա- տուի ամենաբարի ցանկություններին, կստացվի աննպատակ ու անմիտ թեթևադրություն:

### ԼՐԱԳՐԻ ՀԵՏ ԾԱՆՈԹԱՆԱԼԸ

Ամենից առաջ սովորողը պետք է գիտենա, վոր լրագիրն ունի իր անունը և բաղկացած է բաժիններից, վորոնք իրենց մեջ ընդ- գրկում են հողվածներ, հեռագրեր, քրոնիկա, հայտարարություններ և այլն: Ապա նա պետք է պարզ հասկանա յուրաքանչյուր բաժնի եյությունը (հեռագրերը—նորություններ են, հողվածները—բացա- տրություններ ու քննադատություններ այս կամ այն հարցերի նկատմամբ և այլն): Թե վհր բաժնից պետք է սկսել լրագրի հետ

ծանոթացնելը — այդ կախված է ժամանակի անց ու դարձի գլխավոր յերևույթներից (որ. — 1926-27 թ. թ. ընթացքում չինական հեղափոխությունն այնքան հետաքրքրեց բանվորներին, վոր հենց դրանով ել սկսեցին ծանոթացնել լրագրի հետ): Յեթե քաղաքական աշխի ընկնող դեպքեր ու յերևույթներ չկան, ավելի լավ է ծանոթացումն սկսել տեղական կյանքին վերաբերող նյութերից, վորոնք ճարպում են լրագրում և խմբակի կազմի մեծամասնությանը հարազատ են: Լրագրի հետ ծանոթանալն սկսվում է նրանով, վոր սկզբում դասատուն ինքն է դասարանում կարդում կարճ հոդվածներ, իսկ հետագայում՝ կարդում են նաև իրենք սովորողները:

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Մինչեւ այժմ լիկայարանների այբբենական խմբակներում մաթեմաթիկական գրագիտությունն անցնելիս շատ սակավ տեղ ետք է բանավոր հաշվումների մեջ վարժվելուն։ Մեր յուրաքանչյուրքայափոխումը մեզ հարկավոր են գալիս բանավոր արագ հաշվումների ունակությունները, մանավանդ յերբ անհրաժեշտ ե լինում հաշվել կամավոր մեծ թվեր։ Վերցնենք թեկուղ բազմանիշերի բաժանումը, վորոն ավելի հաջող ե լինում, յեթե սովորողը լավ ետիրապետում 100-րի շրջանում բոլոր տեսակի հաշվումներին և առավել ևս լավ, յերբ նա նույնը կարողանաւմ է անել 1000-րի շրջանում։ Ահա այդ հանգամանքից յելնելով բանավոր հաշվումների մեջ վարժեցնելուն մեծ տեղ ե տրված ներկա ծրագրում։ Վարժությունները պետք ե բռնեն առաջին տեղը, մինչեւ լավ յուրացվելը։ Ծրագրում շատ մանրամասնորեն թված են մաթեմաթիկական այն նյութերը, վորոնք դասավորված են իրենց զարգացման աստիճանների հետևողականությամբ։ Բանավոր հաշիվը, որինակ, գումարումը կարելի յե տանել միավորներով, կլոր տասնյակներով, 100-ով, հազարներով և այլն ( $7+8$ ,  $70+9$ ,  $6000+300$ ,  $32+49$ ,  $28.000+62.000$ ,  $35.000.000+49.000.000$  և այլն)։ Նույն ձևով յուրացվում են և մյուս բոլոր գործողությունները։

Դասատրուն հետագայում ևս պետք է հաճախակի դիմի բանավոր հաշվումներին. դրա համար պետք է կլորացնել մեծ-մեծ թվերը և կատարել բանավոր նախնական մոռավոր հաշիվ, իսկ հետո՝ գրավոր—լրեց ու ճշտգրիտ:

Ծրագրի մեջ վոչ մի խոսք չի ասած խնդիրների մասին, բայց այդ գեռ չի նշանակում, թե մաթեմաթիկական ունակությունները պետք ե ձեռք բերվեն միայն չոր ու մերկ թվական որինակների միջոցով։ Ընդհակառակը, մաթեմաթիկական ունակությունները պետք ե յուրացվեն և ամրացվեն զլխափորապես 1—2 հարց ունե-

ցող խնդիրների միջոցով, վորպեսզի սովորողները կարողանան գիտակցորեն կիրառել այս կամ այն գործողությունը։ Խնդիրները պետք են լինեն կարճ և մատչելի։

**Մետրական չափերից պետք է ծանոթացնել միայն կենսական նշանակություն ունեցողների հետ, այն և՝ մետրի, սանտիմետրի, կիլոմետրի, գրամի, կիլոգրամի, տոննայի, լիտրի և այլեկտարի հետ, չբացատրելով նրանց ծագումը պատմականորեն, վորովհետև դապատկանում ե կիսագրագիտական խմբակների ձրագրին:**

Թուսական չափերը մետրականի (և ընդհակառակը) վերածել չեն հարկավոր, այլ պետք է տալ միայն դրանց մոտավոր համեմատությունները, որինակ, այս ձևով՝  $m_{\text{ետր}} = 1^{1/2}$  արշ. (ավելացնել՝ „հանած  $1^{1/2}$  վերշոկ“) կամ  $22^{1/2}$  վերշոկի։ Կիլոմետրը վերստից, միքիչ պակաս ե (15 կմ. = 14 վերստի)։ Կիլոգրամը =  $2^{1/2}$  ֆունտի։ Տոննան = 61 քիլո։ Լիտրը =  $1^{1/3}$  շլու (բորժումյան շիշ), Հեկտարը դեսյատինից միքիչ պակաս ե։ Թուսական չափերը մետրականի հետ պետք է համեմատել հետեւյալ ձևով՝ որշինը = 71 սմ., վերստը միքիչ ավել է կիլոմետրից, գրանքան (ֆունտը) = 400 գրամի ( $1/2$  ֆ. = 200 գր.,  $1/4$  ֆ. = 100 գր.,  $1/8$  ֆ. = 50 գր.), փութը = 16 կգր. (միքիչ ավել), դույրը = 12 լիտր (քիչ ավել)։

Համրանքի և գործողությունների յուրացման ամբողջ ընթացքում սովորողները պետք ե զուգնթացաբար վարժվեն նաև համրիչի վրա։ Այսպես, ... որինակ, յերկնիշերի համրանքը, գումարումը, հանումը, կլոր թվերի հարյուրականներով և հազարներով հաշվելը միշտ պետք ե զուգնթացորեն կատարել համրիչի վրա, այդպիսով հնարավորություն տալ սովորողներին վարժվել դրա վրա հաշվումներ կատարելում։ Այդպես պետք ե անցնել նաև կամավոր թվերի հաշվումները։

Յեռանիշ և բազմանիշ թվերի համրանքն անցնելիս պետք է ուշադրություն դարձնել գերոյի գործածության վրա, վորը միշտ փոխարինում է այս կամ այն կարգի բացակայող միավորին։ Դրա համար պետք է ավելի յերկար կանգ առնել այդպիսի թվերի ընթերցման և գրանցման վարժությունների վրա (205, 350, 4075)։

Կամավոր մեծության թվերը դասերի բաժանելիս պետք է գործածել միայն միջակետը և վոչ ստորակետը, հակառակ դեպքում այդպիսի թվերը հեշտությամբ կարելի կլինի շփոթել տասնորդական կոտորակների հետ, վորով մեծ խանգարումներ կառաջանան:

Մաթեմաթիկական յուրաքանչյուր հետևյալ ունակության յուրացմանը կարելի յե անցնել միայն այն ժամանակ, յերբ նախորդ ունակություններն արդեն յուրացված են կատարելապես:

Աստիճան ցույց տվող նշանը բացատրելիս պետք է սահմանափակել միայն նրանով, վոր սովորողները կարողանան կարդալ և ըմբռնել, որինակ, այսպիսի դարձվածքներ՝  $+ 5^\circ$  (5 աստիճան ջերմություն) կամ  $- 3^\circ$  (3 աստիճան ցրտություն) և այլն:

Թվերի  $10 - 100 - 1000$  անգամ ավելացնելը և պակասեցնելը սովորողները պետք է կատարեն գիտակցորեն և վնչ թե մեխանիկ կերպով. դրա համար անհրաժեշտ ե յուրաքանչյուր դեպքը յուրացնելու նպատակով կատարել միքանի վարժություններ, մինչև սովորողները պարզորեն կհամոզվեն, վոր թիվը  $10, 100$  և  $1000$  անգամ ավելացնելիս հարկավոր ե յետեկց գրել  $1 - 2 - 3$  զերոներ, իսկ նույն ձեռվ պակասեցնելու համար պետք ե վերջից դեն ձգել նույնպես  $1 - 2 - 3$  թվանշան: Առաջին դեպքում միավորները խորանում են, իսկ յերկրորդ դեպքում մանրանում:

Տվյալ թվի տոկոսը գտնելը պետք է սովորեցնել հենց արհմիությանը տալիք տոկոսները վորոշելով, այսինքն՝ մանեթից կոպեկ հաշվելով: Այսուհետեւ պետք ե այդ ձեվակերպել վորպես  $100\text{-ից}$  մեկ կամ միքանի միավորներ գտնելու ձև, բայց վոչ այնպես, վոր թվա, թե գտնում ենք  $\frac{1}{100}$  մասը: Յերբ սովորողներն արդեն կարողանում են թվերը պակասեցնել  $100$  անգամ, այն ժամանակ կարելի կիմնի տոկոսները բացատրել: Յենթադրենք՝ խնդրի պահանջով պետք ե գտնել  $45.000$ -ը  $25\%$ : Այստեղ նախ պետք ե գտնել  $1\%$  ( $45.000 : 100 = 450$ ) և ապա  $25\%$  ( $450 \times 25$ ): Յերբ սովորողներն արդեն կարողանում են կլորացնել մեծ-մեծ թվեր, այն ժամանակ կարելի յե տալ նաև այնպիսի խնդիրներ, ուր պահանջվում ե գտնել կամավոր մեծության թվի  $\%-\ը$ , ինչպես որ՝  $128.467 - 14\%-\ը$ : Նախ այդ թիվը կլորացնվում ե հարյուրներով կամ հազարներով ( $128.000$  կամ  $128.400$ ), վորից հետո նախ գտնել այդ թվի  $1\%-\ը$  և ապա  $- 14\%-\ը$ :

Ուղանկյունու մասին գաղափար տալիս սահմանափակվել պատուհանի և դռան ձեռլով, սովորողների ուշադրությունը դարձնելով այն հանգամանքի վրա, վոր դրանց հարեւան կողմերը հավասար չեն, այլ մեկը կազմում ե . յերկարություն, իսկ մյուսը՝ „լայնություն“: Անցնելով քառակուսուն շեշտել, վոր, բացի անկյունները հավասար լինելուց, հավասար են նաև հարեւան կողմերը (նաև բոլոր կողմերը): Մակարդակի գաղափարը պետք ե կապել սովորողներին ծանոթ ձեռքի հետ (վորեւ ուղանկյուն հրապարակի կամ հենց սենյակի հատակի հետ):

Տասնորդական կոտորակի գաղափարը պետք ե կայանա նրանում, վոր սովորողը կարողանա բացատրել, որինակ, այսպիսի ար-

տահայտություններ՝  $12,5$  ոուք. =  $12$  ո.  $50$  կոպ.,  $3,75$  ոուք. =  $3$  ո.  $75$  կոպ. (տասնորդական մասը—տասկոպեկանոցներ, հարյուրերորդականներ—կոպեկանոցներ),  $4,7$  մետրը =  $4$  մետրի  $70$  սմ.,  $14,85$  մետրը =  $14$  մ.  $85$  սմ.,  $12,1$  կիլոմետրը =  $12$  կիլոմետրի  $100$  մետրի և այլն: Նաև պետք ե կարողանա թելադրությամբ դրել (որինակ՝  $1,15, 2,05, 3,4, 7,125, 8,045, 25,007$ ):

Մասշտաբի մասին պետք ե հասկացնել, վոր դա մի պայմանական փոքրիկ չափ ե, վորի միջոցով կարողանում ենք հասկանալ ու ըմբռնել քարտեզի վրայի տարածությունները: Նա հնարավորություն ե տալիս նաև, մեծ չափերը մանրիկ չափերով փոխարինելով՝ նկարել պահաներ և քարտեզներ: Վորպես որինակ կարելի ե նկարել (գծել) գրատախտակի վրա  $450$  սմ.— $450$  կիլոմետրի տեղ, վորը կազմում ե յենթադրյալ  $2$  քաղաքների միջի տարածությունը:

Քաղցրագիտությունը, տնտեսաշարհագրությունը յեկ աւշարհագիտությունը (բնագիտություն) մտցրած են ծրագրի մեջ վնչ վորպես ինքնուրուցյն, սիստեմատիկորեն մշակվող դիսցիպլիններ, այլ դրանք պետք ե կիրառվեն միայն վորպես բացատրություններ այն հարցերի համար, վորոնք կալատահեն այբբենական խմբակների համար կազմած դասագրքերի „այբբենական“ և „հետայրբենական“ (ընթերցարան) մասում: Մի խոսքով, քաղցրագիտությունը և տընտեսաշխարհագրությունը պետք ե այնպես կիրառել, վոր դրանց միջոցով լիկայանում սովորողները կարողանան, հասկանալ իրենց շշապատի հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքն ու անցուղարձը:

Վերև բերված են ու թեմաների ձեռվ ձեսկերպած քաղցրագիտությունից, տնտեսաշխարհագրությունից և աշխարհագիտությունից վերցրած ու շոշափած հարցեր: Ահա այդ թեմաները ձեսկերպող հարցերը միայն պետք ե մշակել շատ տարրական կերպով, սկսելով ամենամոտիկից և առանց խորանալու:

Առաջին թեման հաշված ե մոտավորապես  $2$  ամսվա համար, վոր հերիք ե այբբենական մասն անցնելուն: Այբբենը կառուցված և հիմնավորված ե լոգունգների վրա: Քաղցրագիտական տեղեկությունները պետք ե տալ շատ համառոտ զրույցների միջոցով, չբարդացնել այս կամ այն հարցը, այլ ժամանակի մեծ մասը հատկացնել ունակություններ ձեռք բերելուն: Այդ թեման մշակելիս պետք ե միքանի անգամ յետ դառնալ դեպի „ինչ են խորհուրդները“ վորոշումը: Այստեղ սկզբում սովորողներին պետք ե տալ ամենատարրական վորոշումի (լոգունգի) ձեռվ, իսկ հետագայում արդեն տալ լրիվ վորոշումը, վորովինետեւ դա յե հիմք ծառայում խորհրդային շինարարությանը վերաբերող բոլոր գիտությունների համար:

Յերկրորդ թեմայում՝ շրջանների հետ ծանոթանալիս՝ պետք ե սահմանափակվել միայն դրանց անուններով և յուրաքանչյուրի հարստություններն առանձին-առանձին նշելով։ Հենց շրջաններն անցնելիս ել պետք ե ծանոթացնել քարտեզի հետ, բայց վոչ մի դեպքում չպետք ե թույլատրել, վոր սովորողները „հյուսիս“, „հարավ“, „արևելք“ և „արևմուտք“ բառերի տեղ ասեն՝ „վերև“, „ներքև“, „աջ“ և „ձախ“, վորովհետև դրանով նրանց գլխի մեջ աշխարհի կողմերի գաղափարը և դրանց քարտեզի վրան ձևակերպելու պայմանները կշփոթվեն։

Աշխարհի կողմերն ու քաղաքները քարտեզի վրա գտնելու համար պետք ե ուղղություն պահպանել վորոշ վայրերի նկատմամբ (որենտացիայի հենակետ պետք ե ծառայեն հայտնի վայրերը)։

Յերրորդ թեմայի նկատմամբ պետք ե շատ զգույշ լինել և նյութը չբարդացնել։ Արդյունաբերության տեսակներն անցնելիս պետք ե միայն ընդհանուր տեղեկություն տալ նրանց ժամանակակից (արդի) վիճակի մասին (արտադրվող նյութերը, տվյալ արդյունաբերության գլխավոր շրջանները և քարտեզի վրա ցույց տալ այդ շրջանները), չբացատրելով և պատմականորեն չլուսաբանելով այն Մարդու մարմնի գլխավոր որգանների և ողի մասին տրվելիք գաղափարները պետք ե կապել առողջապահության, աշխատանքի պաշտպանության և աշխատանքի ու կեցության առողջացման հետ։

Չորրորդ թեմայում՝ „հողը“ բացատրելիս պետք ե սահմանափակվել միայն „հողը յերկրի ամենավերին շերտն ե“ գաղափարով։ Պետք ե նաև ավելացնել միայն, վոր „սեահողը արգավանդ ու բերքի յե“, իսկ, որինակ, „ավազահողը—անբերքի“։ Զերմաշափը—ողի, ջրի և մարդու մարմնի ջերմությունը չափելու մի գործիք ե. սովորեցնել նրա հետ վարփելը և հասկանալ նրա աված ցուցմունքները։ Սննդառությունը բացատրելիս համեմատել իրար հետ՝ նույն ու սննդառատ կերակուրը սակավանույթ ու կիպիտ կերակրի հետ, լավ ու վատ վառելիքը իրար հետ։ Առողջապահության հետ կապել նաև տարափոխիկ (գարակիչ) հիվանդությունների մասին տրվելիք տեղեկությունները և գաղափարը։

Վֆցերորդ թեմայի նյութերը մշակելիս սահմանափակվել միայն անկախ—ինքնուրույն՝ հանրապետություններով, չշոշափելով ինքնափարները, վորովհետև „ինքնափար“ գաղափարը բավականին բարդ ե և դժվար ըմբռնելի այլբենական խմբակների համար։

Բացի մայրաքաղաքներից կարելի յե ցույց տալ նաև՝ Աղբեջանում—Գանձակ, Սալյան, Լենքորան, Ստեփանակերտ, Նախիջևան,

Նուխի, Շուշի, Շամախի. Ա. Ա. Ֆ. Խ. Հ-ում—Բաթում, Լենինական, Քուլթայիս և այլն. Ի. Ա. Ֆ. Խ. Հ-ում—Լենինգրադ, Արխանգելսկ, Խվանովովով. Վազնեսենսկ, Վլադիվաստոկ, Ռաստով, Գրոզնա և այլն։ Ազգություններից հիշատակել միայն խոշորներին, իսկ կուլտուրականությունը վերցնել  $\% 0\text{-ով}$ ։

V. և VI. թեմաների մասին բացատրություններ չեն տրվում, վորովհետև դրանց միջի հարցերը շատ պարզ են։

Առաջին յերկու<sup>1</sup>  
տախուների համար

Ք ա ղ գ ր ա զ ի ս ո ւ թ յ ո ւ ն

Աշխատավորության կյանքն առաջ և հիմա:  
Աշխատավորության մղած պայքարը խորհուրդների համար:  
Ի՞նչ բան են խորհուրդները:  
Իշխանության նվաճումն աշխատավորների կողմից:  
Հոկտեմբերյան հեղափոխությունը:  
Քաղաքացիական կոլվը:  
Նախկին և այժմյան բանակները:  
Կարմիր բանակի գերը խորհուրդների համար մղված կովում:  
Համ. Կոմ. Կուս-ի (Վ. Կ. Պ. Բ.) գերը Խորհրդային իշխանության հաստատման գործում:  
Ի՞նչ բան են խորհրդները (բանվորներից և գյուղացիներից ընտրվածներ):  
Կումմունիստական ինտերնացիոնալ—Կոմինտերն:  
Լենինը՝ Կոմկուաի և Կոմինտերնի առաջնորդ:  
Արհմիությունները վորպես աշխատավորների պաշտպաններ:  
Կոոպերացիա (նրա նշանակությունն աշխատավորության համար):  
Կոմսոմոլներն ու պիոներները: Նրանց կազմակերպչական և դաստիարակչական գերն ու նշանակությունը:  
Մեր պետությունը (ի՞նչպես և նա կոչվում), մամ և պատկանում բարձրագույն իշխանությունը:

Խորհրդային իշխանությունը

— աշխատավորների իշխանությունն եւ:

Մայրենի լեզու	Մարեմաթիկա
Զրույց. նախադասություններ: Նախադասությունը բաժանել բառերի և ծանոթ բառերից նոր նախադասություններ կազմել: Բառերը բաժանել վանկերի ու ծանոթ վանկերից նոր բառեր կազմել: Վանկերը բաժանել հընչյունների (տառերի) և հնչյուններից՝ բառեր, բառերից ել նախադասություններ կազմել: (Նախադասություններն ու բառերը լսողության և դիտողության ոգնությամբ վերլուծել):	Արարական և հոռմեական թվանշանների հետ ծանոթացների աշակերտներին—մինչև 10-ը ներառյալ: Համրիչի վրա վարժություններ կրուտանյակներով և միավորներով (հաշվել տալ աշակերտներին): Տասնավորների և հայրուրավորների թվարկումը գրավոր:
Զայնավոր և բաղաձայն հնչյուններ: Այբբենը աստիճանաբար անցնել (վոչ այբբենական կարգով):	Մետր և սանտիմետր: Համեմատել վերջնս արշինի հետ: Համրիչի վրա հաշվել տալ հազարավորներով և միևնույն ժամանակ՝ նրա գրանցումը: Տասնավորներով, հարյուրավորներով և ապա հազարավորներով նախ բանավոր ու հետո գրավոր գումարման և հանման գործողությունները:
Տպագրերով արտագրել (նկարել) ամբողջ բառեր ապա և վանկեր:	Նույնը համրիչի վրա: Կլոր 10-ով, 100-ով և 1000-ով բազմապատկման ու բաժանման բանավոր գործողություններ:
Շանոթություն ձեռագիր տառերի հետո: Դիտողական թելադրություն նախ՝ բառերով ապա պարզ նախադասություններով: Բառերի սպագությունը, որինակ ման., կոպ. և այլն:	Յերկնիշ թվերի թվարկումը նախ համրիչի վրա և ապա գրավոր:
«Ե» տառի վրա առանձնապես ուշադրություն դարձնել: Վերջակետ:	Գումարման և հանման գործողությունները յերկնիշ թվերով 100-ի շրջանում նախ բանավոր և ապա համրիչի վրա:
Հարցական և բացականչական նշանների գործածությունը:	

## Մի ամսվա համար III ամիս

ԽՍՀՄ յեվ Անդրկովկասի բնական հարստու-

Տիտղոս. աշխարհա- գրություն	Քաղքաքիւուրյուն	Բնագիւուրյուն
<p>ԽՍՀՄ և Անդրկով- կասի բնական հարս- տություններով աչքի ընկնող շրջաններն ա- ռանձին-առանձին: (Անդրկովկաս (Բագու- և այլն), Դոնիրաս, Ռե- րալ, Գրոզնի, Հյուսի- սային շրջան, Սիրիո, Ռէկրախնա, Հյուսի- սային Կովկաս, Մերձ- գոլգյան շրջան, Կաս- պից ծով, թուրքե- ստան):</p> <p>Ծանոթություն քար- տեղի հետ: Ցույց տալ քարտեղի վրա ցամա- քը, ովկիանուներ, ծո- վեր, գետեր, լճեր, լեռներ, հարթավայ- րեր, քաղաքներ և հա- ղորդակցության ձա- նապարհները:</p> <p>ԽՍՀՄ-յան տնտեսու- թյան յերկու գլխավոր ճյուղերը (գյուղատն- տեսություն և գործա- րանային արդյունա- բերություն):</p> <p>Ազգաբնակչության զբաղմունքների կա- խումը բնական հարս- տություններից:</p>	<p>Մեր տնտեսության հիմքը կազմում ե կոլեկտիվ աշխա- տանքը:</p> <p>Մեր ժողովրդական տնտեսու- թյունը. նրա բարձրացումն ու կենցաղի բարելավումը:</p>	<p>Աշխարհի կողմերը կողմնացույց:</p>

թուները յեվ ազգաբնակչության գլխավոր գրադաւոները

Մայրենի լեզու	Մարեմսարկիս
Փոքրիկ հոգվածների գիտակ- ցական ընթերցումը:	Մասշտաբ (համկացողություն): Կիլոմետր—սրա համեմատությունը վեր- ստի հետ (վերջինս սաժեններով): Կլոր հա- զարավորների թվարկումը նախ համրիչի վրա և ապա գրավոր:
Գլխատառերի գործածու- թյունը ազգանահներ և անուն- ներ գրելիս: Ցուցակներ կազմել նախ հասարակ և ապա այլու- բենական կարգով:	Բազմապատկման աղյուսակը բերանացի: Արտադրյալների գրանցումը (միայն):
Վերլուծված թեմայի վերա- բերմամբ տված հարցերի շատ կարճ պատմախաններ:	Պիֆազորի բազմապատկման աղյուսակը:
Տողադրությունը տառը տողադրությունի ժա- մանակ:	Ալոր հայրուրներով և հազարներով բազ- մապատկման (համաձայն բազմապատկման աղյուսակի) գործողության բանավոր վար- ժություններ:
	100-ի շրջանում բաժանման (համաձայն բազմապատկման աղյուսակի) գործողու- թյան բանավոր վարժություններ:
	Նույնը միայն կլոր հազարներով:

Մի ամսվա համար:  
IV ամիս

## ԽՍՀՄ-ի գործարա-

Տնտեսաշխարհագործություն	Քաղցրագիտուրյուն	Բնագիտուրյուն
Արդունաքերության տեսակները՝ 1. վառելանյութերների, ածուխ, փայտ, տոռք:	Արդունաքերության վիճակը Աղբբեջանում և ԽՍՀՄ-ում: Արդյունաքերության վարչական մարմինները—ծողը. Ծնտես. Գեր. Խորհուրդ (BCHX): Տրեստներ և սինդիկատներ: Տեղական և պետական նշանակություն ունեցող արդյունաքերություն:	Քարածություն և նավթի կատարություն և աղաղական հասկացողություն, մարդու մարմնի գլխավոր որդանների մասին: Ոչը և նրա կազմությունը: Ծնչառության որդանները:
2. Տեքստիլ արդյունաքերություն—բամբակագործություն, բուրդ, քաթան, մետաքսագործություն:	Տեղական հասկացողություն և աղաղական նշանակություն:	Տարրական հասկացողություն, մարդու մարմնի գլխավոր որդանների մասին:
3. Մետաղաարդյունաքերություն.— Մետաղի արտադրություն և մետաղագործություն:	Տեղական կոմիտեներն արհեստմիությունների հիմնական բջիջներն են*) (գործարան. կոմիտեներ, պրոմկոմներ, ֆաբկոմներ, շրջկոմ, բանկոմ): Աշխատանքի պաշտպանություն: Կոնֆլիկտ. Գնահատող. Կոմիս. (P. K. K.): Էնդհանուր ժողովներ և ներկայացուցիչների խորհուրդ:	Ոչը և նրա կազմությունը: Ծնչառության որդանները:
4. Քիմիական: 5. Կառուցողական: 6. Ելեքտրո-արդյունաքերություն: 7. Տնայնագործություն:	Տեղական կոմիտեներն արհեստմիությունների հիմնական բջիջներն են*) (գործարան. կոմիտեներ, պրոմկոմներ, ֆաբկոմներ, շրջկոմ, բանկոմ): Աշխատանքի պաշտպանություն: Կոնֆլիկտ. Գնահատող. Կոմիս. (P. K. K.): Էնդհանուր ժողովներ և ներկայացուցիչների խորհուրդ:	Արյանաքերության կենտրոնական շրջանները—Կենտրոնական Ռուալ Դունաս, Լենինգրադ, Բաքու և այլն:

\*) (Первичные ячейки).

## նային արդյունաքերությունը

Մայրենի և եղություն	Մաքելի և պիտ
Սոկոսի մասին հասկացողություն: Տոկոսի նշանի (%) գրելն ու կարդալը: Բազմապատկում և բաժանում 100-ի շրջանում (ավելի դժվար գեպքեր): Նույնը կոր հազարներով: Տոննա և նրա համեմատությունը վութերի հետ: Միավորի ամենահասարակ բաժինների մասին հասկացողություն ( $\frac{1}{2}$ , $\frac{1}{4}$ , $\frac{1}{8}$ , $\frac{3}{8}$ , $\frac{5}{8}$ , $\frac{7}{8}$ , $\frac{3}{4}$ և այլն): Ուղանկյուն և շրջանաձև դիագրամների ընթերցումը (այս դիագրամները ցույց են տրվում ուսուցչի կողմից): Յեռանիշ թվերի թվարկումը նախ համրիչի վրա և ապա գրավոր: Գումարում և հանում յեռանիշ թվերով համրիչի վրա և գրավոր:	Տոկոսի մասին հասկացողություն: Տոկոսի նշանի (%) գրելն ու կարդալը: Բազմապատկում և բաժանում 100-ի շրջանում (ավելի դժվար գեպքեր): Նույնը կոր հազարներով: Տոննա և նրա համեմատությունը վութերի հետ: Միավորի ամենահասարակ բաժինների մասին հասկացողություն ( $\frac{1}{2}$ , $\frac{1}{4}$ , $\frac{1}{8}$ , $\frac{3}{8}$ , $\frac{5}{8}$ , $\frac{7}{8}$ , $\frac{3}{4}$ և այլն): Ուղանկյուն և շրջանաձև դիագրամների ընթերցումը (այս դիագրամները ցույց են տրվում ուսուցչի կողմից): Յեռանիշ թվերի թվարկումը նախ համրիչի վրա և ապա գրավոր: Գումարում և հանում յեռանիշ թվերով համրիչի վրա և գրավոր:

Մի ամսվա համար  
Վ ամիս

Խ Ս Հ Մ -յան

Տեսաշխարհագործություն	Քաղաքագիտություն	Բնագիտություն
Գույզատնտեսությունն Ադրբեջանի և ԽՍՀՄ-յան ազգաբնակչության հիմնական գրաղմունքն ե:	ԽՍՀՄ-ը գյուղատնտեսական յերկիր ե: Գյուղացիների գրությունը մինչումբեմբերյան և հետհոկտեմբերյան շրջանում: Հողի բաշխումն առաջ և հիմա: Դասակարգային բաժանումը գյուղում: Զքավորների և միջակների շահերի պաշտպանությունը: Փոխագարձ ոգնության կոմիտեները: Գյուղատնտեսական կոմմունաներ, արտելներ և ընկերությունները: Գյուղատնտեսական արտադրական կոռպերացիա: Գյուղական ժողովը և գյուղիորհորդը Խորհրդային իշխանության սկզբնական (первичայն) բջիջներ են:	Հող: Զրի շրջանառությունը՝ որինակ՝ քառ. մետր, քառ. սաժեն, քառ. արշին և այլն: Կլիմանցամաքուս և ծովի վրա (морской и континентальный). Տերմոմետր: Բայսերի նշանակությունը ողի մաքրման համար: Սննդառություն: Տարափոխիկ հիվանդություններ: Հասկացողությունը առողջապահության մասին:
Գյուղատնտեսության գլխավոր շրջանները (Ուկրաինա, Սիբիր, Թուրքիստան, Հուախային Կովկաս, Մերձվոլգյան շրջան—ցույց տալ քարտեզի վրա): Գյուղատնտեսությունն Ադրբեջանում: Գյուղատնտեսության հետամնացության պատճառները: Հողի պրիմիտիվ ձեռվագելլը: Յեռադաշտ ցանքս: Բազմադաշտ սիստեմին անցնելը: Հանքային պարարտացում: Գյուղատնտեսական մեքենաներ: Ագրանոմը գյուղում: Մելիորացիա: Գյուղատնտեսական արդյունաբերություն (գինեգործություն, կաթնատնտեսություն ալրազացներ, շաքարի տնտեսություն և այլն):	Գյուղացիների գյուղատնտեսական յերկիր ե: Գյուղացիների գրությունը մինչումբեմբերյան և հետհոկտեմբերյան շրջանում: Հողագործային բաժանումը: Համակարգային բաժանումը մասին: Գյուղակարացման և այլ առողջանական նշանների բացարությունն ու գործածությունը: Հասկացողությունը առողջապահության մասին:	Սիր շարք բառերի սղագրություն, որինակ՝ քառ. մետր, քառ. սաժեն, քառ. արշին և այլն: Համարման և հանման գրածողություններ կլոր հազարներով (հարյուր հազարներով) համրիչի վրա և գրավոր: Հասկացողություն ուղղանկյան և քառակուսու մասին: Հասկացողություն մակարդակի մասին: Քառակուսի մետր, արշին, սաժեն, դեսատնի, հեկտար և լիտր: Յեռանիշ թվերի բազմապատկումը միանիշ թվերով: Յեռանիշ թվերի բաժանումը միանիշ թվերի վրա: Բազմապատկումը և բաժանումը կլոր հազարներով: Աստիճանի նշանը: Կլոր միլիոնների թվարկումը համրիչի վրա և գրավոր: Բազմապատկումը յերկնիշ թվերով: Ուղղանկյան մակարդակը գտնել:
Ագրանոմը գյուղում: Մելիորացիա: Գյուղատնտեսական արդյունաբերություն (գինեգործություն, կաթնատնտեսություն ալրազացներ, շաքարի տնտեսություն և այլն):	Գյուղացիների գյուղատնտեսական յերկիր ե: Գյուղացիների գրությունը մինչումբեմբերյան և հետհոկտեմբերյան շրջանում: Հողագործային բաժանումը: Համակարգային բաժանումը մասին: Գյուղակարացման և այլ առողջանական նշանների բացարությունն ու գործածությունը: Հասկացողությունը առողջապահության մասին:	Կլոր հազարների թվարկումը համրիչի վրա և գրավոր: Գումարման և հանման գրածողություններ կլոր հազարներով (հարյուր հազարներով) համրիչի վրա և գրավոր: Հասկացողություն ուղղանկյան և քառակուսու մասին: Հասկացողություն մակարդակի մասին: Քառակուսի մետր, արշին, սաժեն, դեսատնի, հեկտար և լիտր: Յեռանիշ թվերի բազմապատկումը միանիշ թվերով: Յեռանիշ թվերի բաժանումը միանիշ թվերի վրա: Բազմապատկումը և բաժանումը կլոր հազարներով: Աստիճանի նշանը: Կլոր միլիոնների թվարկումը համրիչի վրա և գրավոր: Բազմապատկումը յերկնիշ թվերով: Ուղղանկյան մակարդակը գտնել:

Պյուղատնտեսությունը

Մայրենի լեզու	Մարեմաթիկա
Սիր շարք բառերի սղագրություն, որինակ՝ քառ. մետր, քառ. սաժեն, քառ. արշին և այլն: Համարման և հանման գրածողություններ կլոր հազարներով (հարյուր հազարներով) համրիչի վրա և գրավոր: Հասկացողություն ուղղանկյան և քառակուսու մասին: Հասկացողություն մակարդակի մասին: Քառակուսի մետր, արշին, սաժեն, դեսատնի, հեկտար և լիտր: Յեռանիշ թվերի բազմապատկումը միանիշ թվերով: Յեռանիշ թվերի բաժանումը միանիշ թվերի վրա: Բազմապատկումը և բաժանումը կլոր հազարներով: Աստիճանի նշանը: Կլոր միլիոնների թվարկումը համրիչի վրա և գրավոր: Բազմապատկումը յերկնիշ թվերով: Ուղղանկյան մակարդակը գտնել:	Կլոր հազարների թվարկումը համրիչի վրա և գրավոր: Գումարման և հանման գրածողություններ կլոր հազարներով (հարյուր հազարներով) համրիչի վրա և գրավոր: Հասկացողություն ուղղանկյան և քառակուսու մասին: Հասկացողություն մակարդակի մասին: Քառակուսի մետր, արշին, սաժեն, դեսատնի, հեկտար և լիտր: Յեռանիշ թվերի բազմապատկումը միանիշ թվերով: Յեռանիշ թվերի բաժանումը միանիշ թվերի վրա: Բազմապատկումը և բաժանումը կլոր հազարներով: Աստիճանի նշանը: Կլոր միլիոնների թվարկումը համրիչի վրա և գրավոր: Բազմապատկումը յերկնիշ թվերով: Ուղղանկյան մակարդակը գտնել.

Մի ամսվա համար ԽՍՀՄ-ն հաղորդակցության նանապարհները յեզ

Տնօտակարիա-գություն	Քաղցրագիտություն	Բնագիտություն
<p>Հաղորդակցության ճանապարհների զա- նազան տեսակները (ջրային, յերկաթու- ղային, խճուղիներ, ողային տրանսպորտ և այլն:</p> <p>Դրանց նշանակու- թյունը:</p> <p>Աղբբեջանի տրանս- պորտը՝ յերկաթուղի- ներ գեղական բաթում, Ռոստով, Զուլֆա և դրանց նշանակու- թյունը:</p> <p>Կասպից ծովի նշա- նակությունը. Բագուն վորպես չառչող նա- վահանգիստ:</p> <p>Ժողկապ—փոստ, հեռագիր, ռադիո:</p>	<p>Կանոնավոր ապրանքափոխա- նակությունը քաղաքի և գյուղի մեջ:</p> <p>Արդյունաբերական և գյուղա- տնտեսական ջրջանների փոխա- դարձ նշանակությունը, վորպես արդյունաբերության և գյուղա- տնտեսության տնտեսության կապի ֆակտոր:</p> <p>Գյուղի և քաղաքի կապը:</p>	<p>Շոգին վորպես շար- ժիչ ույժ. շոգեցարժ- ներ (շոգեկառք և շո- գենավ):</p> <p>Ողատորմիոց:</p>

Մի ավսվա համար  
VII ամիս

ବୁ. ଉ. ଜୀ. ପାତ୍ର

<p>ԽՍՀՄ-ն սահման-ները:</p> <p>Գտնել քարտեզի վրա անկախ հանրապետությունները, նրանց մայրաքաղաքներն ու գլխավոր քաղաքները:</p>	<p>ԽՍՀՄ-ն և Ադրբեջանի ազգաբնակչության ազգային կազմը: Ազգաբնակչության կուլտուրական մակարդակը: Յարակ իշխանության ազգության ազգությունների ճնշված լինելը: Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը: Անկախ հանրապետություններ կազմելը: Ընտրությունները խորհրդային կառավարությունը: մեջ (ովքեր ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք. ովքեր են զրկված): Խորհրդային իշխանության տեղական մարմինները (ուսյգործ-կոմ—դայրա, կենտրոգործկոմ): Բազիսորհուրդ և նրա բաժինները: Խորհրդուրդների համագումարներն Ադրբեջանում (Ադրբեյջանի գործուրդկոմ), Ա.Ս.Ֆ.Խ.Հ.-ում (Անտրկենտրոգործկոմ), ԽՍՀՄ-ում (Համ. կենտրոգործկոմ): Ադրբեջանի, Ա.Խ.Ֆ.Ս.Հ.-ն և ԽՍՀՄ-յամ ժողկոմիները:</p>
---	--

նրանց նշանակությունն աշխատավորների սնտես. կապի տեսակետից

Մայրենի լեզու	Մարեմաբիկա
Գլխատառը հատուկ անունների սկզբին (քաղաքների, գետերի, ծովերի, փողոցների):	Գրավոր չորս գործողությունները կորմիյլոններով, իսկ համրիչի վրա գումարման և հանման գործողությունները:
Զակերտներ:	Կամավոր մեծություն ունեցող թվերի թվարկումը համրիչի վրա և գրավոր:
Սղագիր բառեր—քաղ., գավ., նահ. և այլն:	Կամավոր մեծություն ունեցող թվերի կլորացումը:
Թղթակցություններ (նրանց տեսակները և հասցեներ):	Դումարման և հանման գործողություններ կամավոր մեծություն ունեցող թվերով (համրիչի վրա և գրավոր):
Նամակագրություն:	Միկրոմետր:
Նկարագրություններ (բերանացի):	Մասշտաբի ոգնությամբ քարտեզի վրա տարածությունների չափումը:
Տալ վերնագրել:	

ազգաբնակչությունը

Ծանոթություն տեղական  
թերթերի հետ:  
Ծանոթություն քաղբառա-  
րանների հետ:  
Կոլեկտիվ կերպով կազմել  
արված հարցերի պատասխան-  
նելը:

Յեռանիշ թվերի, կլոր միլյոնների և  
հազարների բաժանումը յերկնիշ թվերի  
վրա:  
Կամավոր մեծություն ունեցող թվերը  
մեծացնել և փոքրացնել 10, 100 և 1000  
անգամ:

Դտնել թվի տվյալ %: Կամավոր մեծու-  
թյուն ունեցող թվերի բազմապատկումն ու  
բաժանումը միանիշ և յերկնիշ թվերի վրա:

## Մի ամսվա համար VIII ամիս

Տեսաւորման գրություն	Քաղաքագիտություն	Բնագիտություն
<p>ԽՍՀՄ սահմաններն ու ծովերը. Նրա սահ- մանակից (հարևան)՝ պետությունները:</p> <p>Ծանոթություն Ա. Խ. Ֆ. Ս. Հ.-ն քարտեզի հետ. մանրամասն ծա- նոթություն Աղբյե- ջանի քարտեզի հետ:</p> <p>Քարտեզի վրա գըտ- նել մեծ կապիտալի- ստական պետություն- ներն իրենց մայրա- քաղաքներով:</p>	<p>Մեծ կապիտալիստական կա- ռավարությունների վերաբեր- մունքը դեպի ԽՍՀՄ-ը:</p> <p>Նրանց վերաբերմունքը դե- պի զանազան ազգություններն ու գաղաւթները:</p> <p>Կոմմունիստների պայքարի նպատակը:</p> <p>Վ. Կ. Պ-ի դերը աշխատա- վորության կապիտալիստների ճնշումից ազատվելու համար մղած կովում:</p> <p>Բանվորական շարժումը կա- պիտալիստական յերկրներում,</p> <p>Պատանեկական և պատկո- մական (Պոնօրեց.) շարժումները:</p> <p>Պրոֆինտերն:</p> <p>Կոմինտերնը վորպես համաշ- խարային պրոլետարիատի դե- կավար:</p>	<p>Յերկրագունդ: Գորուաը վորպե- յերկրագնդի պատ- կերը:</p> <p>Ինչպես են առաջա- նում գիշերն ու ցե- րեկը:</p> <p>Տարվա յեղանակ ների առաջանալը:</p>

w j l j b r q r g b r p

Մայրենի լեզու	Մարեմաբիկա
<p>Ոտարագգի բառերի հետ ծա- նոթություն:</p> <p>Կոլեկտիվ կերպով շատ սեղմ արձանագրել կարդացածը (ստեղ- ծագործական գրավորների ձևով):</p>	<p>Մասեր՝ <math>\frac{1}{10}</math>, <math>\frac{1}{100}</math>, <math>\frac{1}{1000}</math>: Հասկացողություն տասնորդական կո- տորակների մասին: Տասնորդական կոտորակների գրելն ու կարդալը մինչև հազարերորդական մասերը ներառյալ:</p> <p>Ժամանակի չափեր—դար, տարի, ամիս, շաբաթ, որ, ժամ, րոպե և վայրկան:</p>



53.583

Библиотека  
Института  
Востоковедения  
Академии Наук  
СССР